

մտանէ յեկեղեցին երգօք եւ նուաղարանօք,
գոհանալով զԱստուծոյ. եւ յետոյ տիրէ բո-
ւանդակ գանձուց եկեղեցւոյ» :

Այժմ կարգն եպիսկոպոսին էր ցուցնելու
Ժողովրդեան իւր դառնութիւնը : Արգիլեց այն
երէցներուն եւ արեղաներուն, որոնք չուղե-
ցին հպատակիլ իր իշխանութեան, կատարել
որ եւ է եկեղեցական պաշտօն կամ մատակա-
րարել սուրբ խորհուրդները : Նորածինները
մնացին անկնունք, մեռեալները՝ անթաղ :
Նոյնպէս Ժողովուրդը, որ ընդդիմացաւ եպիս-
կոպոսին, մնաց եկեղեցիէն հեռու :

Պաշատուր վարդապետ, որ այժմ ա-
ռանձնացած էր Ս. Պաշ վանքը, դեռ ժամա-
նակ մը հանդիսատես եղաւ անցուղարձնե-
րուն : Զէր յուսար ինքը թէ այսպիսի վախ-
ճան պիտի առնէին վէճերը : Սիմէոն դպիր
կը գրէ .

Իսկ նըվիրակն յորժամ լսեց ,
Զմազն եւ զմօրութն իւր ճողեց .
Քովըն նստած զՀայքըն վարեց ,
Զպատճառ եղողնին անիծեց :

Յուսախաբուած էր նաեւ Ժողովուրդը :
Սիմէոն դպիր անոնց բերնէն կը հիւսէ ողբս
(էջ 210) .

Հայերն լալով հառաչէին
Առ նըվիրակն երթային ,
Ողբալով յոյժ յոյժ կսկծազին ,
Աղիւղորմ զայս ասէին .